

ԱՐՇԱԿ ԶՈՊԱՆՅԱՆ
(ծննդյան 100-ամյակի առթիվ)

Արվեստաբանության դոկտոր Գ. Խ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հայ մշակույթի պատմության մեջ իր գրական, հասարակական գործունեության լայն ընդգրկումով, բնագավառների բազմազանությամբ, հայ և օտար շրջանակներում վայելած ճանաչումով ու հեղինակությամբ Արշակ Զոպանյանը գրավում է ամենաաչքի ընկնող տեղերից մեկը։

Որպես ականավոր գրող նա արժանի տեղ ունի ութսունական թվականների արևմտահայ ռեալիստական գրական շարժման մեջ Ա. Արփիարյանի, Տ. Կամսարականի, Լ. Բաշալյանի, Մելքոն Կյուրճյանի, Ե. Օտյանի կողքին։

Կեսգարյա խմբագրական, հրապարակախոսական գործունեությամբ, մանավանդ, «Անահիտ» դրական-գեղաբանական հանդեսով Զոպանյանը մեծ ազդեցություն է թողել արևմտահայ հասարակական մտքի վրա, աճեցրել, ուղղություն է տվել այնպիսի գրողների, որոնք հետագայում դարձել են անվանի դեմքեր։ Նույնատեղ է բազմահազար ընթերցողների ընդհանուր մտավոր պարգացմանը, նրանց հաղորդակից դարձնելով համաշխարհային գրականություն և արվեստի նվաճումներին։

Իր բանասիրական, գրականագիտական գործունեությամբ Զոպանյանը արևմտահայ քննադատական միտքը բարձրացրել է մի նոր աստիճանի։ Նրան է պատկանում հայ միջնադարյան աշխարհիկ չափածո գրականության զգալի մասի հրատարակման և ուսումնասիրման, այդ գրականությունը օտարներին ծանոթացնելու, նրա շուրջ լայն հետաքրքրություն ստեղծելու պատիվը։


* * *

Ծնվել է 1872 թ. հուլիսի 15-ին Կ. Պոլսում, պատմական Հայաստանի Ակն քաղաքից գաղթած ընտանիքում։ Փոքր հասակում կորցրել է մորը, հանձնրվել հորաքրոջ խնամքին, որը մեծացրել է նրան հարազատ որդուն տրվող գուրգուրանքով ու հոգատարությամբ։

Նախնական կրթությունն ստացել է Պեշիկթաշ թաղամասի Մաքրուհյաց վարժարանում, ապա՝ 1887 թ. սովորել է Պոլսի Կենտրոնական վարժարանում Հր. Աճառյանի, Արմեն Արմենյանի և այլոց հետ միասին, աշակերտելով ժամանակի ականավոր դեմքերից Մինաս Զերազին, Մադաթիա Գարագաշյանին, Գարեգին Սրվանձտյանցին, Եղիա Տեմիրճիպաշյանին։

Կենտրոնական վարժարանի սաները, ինչպես Հր. Աճառյանն էլ է վկայում, ազատ տիրապետում էին հայերեն աշխարհարարին, գրաբարին և ֆրանսերենին։ չինված լեզուների այդ իմացությամբ, Զոպանյանը ազահորեն ընթերցում է մի կողմից հայ հին և նոր մատենագրությունը, մյուս կողմից՝ համաշխարհային դասական հեղինակների երկերը։

Ծվ ահա Արփիարյանի խմբագրությունը լույս տեսնող «Արևելք» օրաթերթում երևում են նախ նրա թարգմանությունները Ֆրանսիական նորագույն գրականությունից, ապա՝ արձակ և շափածո ինքնուրույն ստեղծագործությունները («Ազամա վիշտը», «Մեռելոց բարեկենդանը» և այլն), «Երկնքի ձամբան» հեքիաթը, որը հետագայում թարգմանվել է նաև ֆրանսերեն ու գերմաներեն։



Կենտրոնական վարժարանն ավարտելուց հետո Չոպանյանը նվիրվում է մանկավարժական աշխատանքի, դասավանդում է հայկական դպրոցներում, իր ազատամիտ գաղափարներով հակադրվելով պահպանողական «հայկաբաններին»։

Միաժամանակ ծավալում է գրական լայն գործունեությունը Ա. Արփիարյանի «Հայրենիք» օրաթերթի հրատարակման առաջին տարվանից (1891) դառնում է նրա հիմնական աշխատակիցը, տպագրելով այնտեղ արձակ էջեր, ֆրանսիական նորագույն գրականությանը ծանոթացնող հոդվածներ, որոնք կարճ ժամանակում լայն հետաքրքրություն են ստեղծում նրա անվան շուրջ։

Նույն 1891 թ. լույս է րնծայում իր արձակ, շափածո և գրականագիտական ստեղծագործությունները պարունակող «Արշալույսի ձայներ» ժողովածուն, որն րնդունվում է որպես գրական հայտնություն ոչ միայն արևմտահայ գրողների կողմից (Ա. Արփիարյան, Ե. Տեմիրճիպաշյան և ուրիշներ), այլև՝ արևելահայ մամուլում։

Քաջալերված այս ընդունելությունից, Չոպանյանը նույն տարում լույս է ընծայում «Թուղթի փառքը» հոգեբանական վիպակը, իսկ 1893 թ.՝ «Թրթր-ռումներ» բանաստեղծությունների ժողովածուն։ Վերջապես՝ կատարում է երրորդ քայլը՝ իր ուժերը փորձում է դրամատուրգիայում, գրում «Մութ խավեր» դրաման, որը հաջողությամբ բեմադրվում է Պոլսի տարբեր թաղամասերում՝ Խ. Ֆասուլաճյանի թատերախմբի ջանքերով և լայն արձագանք գտնում մամուլում։

1893 թ. նա մեկնում է Փարիզ, մեկ տարի մնում այնտեղ, շարունակելով թղթակցություններ տպագրել Արփիարյանի «Հայրենիք» թերթում։

Փարիզում ավարտում է 1891 թ. սկսած բանասիրական իր առաջին երկը՝ «Պետրոս Դուրյանի կյանքն ու գործը», տպագրում Թիֆլիսում, 1894 թ.։

Վեոադառնալով Պոլիս՝ 1895 թ. սկզբից այնտեղ հիմնադրում է «Ծաղիկ» գրական կիսամսյա հանդեսը, որի էջերում երևում են նրա գրականագիտական արժեքավոր հոդվածները Գրիգոր Նարեկացու, Հակոբ Պարոնյանի, Պետրոս Աղամյանի, Գոնկուր եղբայրների և ֆրանսիացի այլ գրողների մասին։

Չնայած այն հանգամանքին, որ «Ծաղիկը» լույս էր տեսնում համիդյան գրաքննության ամենաճոխ գնդատ տարիներին, երբ արգելված էին ոչ միայն ազատասիրական, հայրենասիրական գաղափարները, այլև, — որքան էլ տարօրինակ թվա, — առհասարակ չափածո երկերը, խմբագրին հաջողվել է հանդեսի շուրջ համախմբել խոստումնալից երիտասարդ ուժեր, որոնք հետագայում դառնալու էին արևմտահայ գրականության աչքի ընկնող դեմքերը, ինչպես Զապել Ծսայանը, Վահան Թեքեյանը, Ռուբեն Զարդարյանը։

Այս շատ օգտակար գործը ընդհատվում է 1895 թ. քաղաքական իրադարձությունների հետևանքով հանդիսացող զանգվածային արտագաղթի պատճառով։ Գրական շարժման ականավոր բոլոր ներկայացուցիչները մեկնում են արտասահման, այնտեղ շարունակելու համար ընդհատված գործը։ Ա. Արփիարյանն ու Լ. Բաշալյանը խարիսխ են գցում Լոնդոնում, հիմնադրում «Նոր կյանք» գրական հանդեսը, Ա. Չոպանյանը 1898 թ. Փարիզում հիմնադրում է «Անահիտ» գրական-գեղարվեստական հանդեսը, որի հետ կապեց նա հետագա իր ամբողջ կյանքը։ Վահան Թեքեյանն ու Միք. Կյուրճյանը, ավելի ուշ, Կահիրեում հիմնում են «Շիրակ» գրական հանդեսը։

Գրական այս նոր օջախներում զարգացման ուրույն մի շրջան է ապրում արևմտահայ ռեալիզմը, մի կողմից կրելով շրջապատի ազդեցությունը, մյուս կողմից ապրելով ներքին վերափոխման մի շրջան, պայմանավորված թեմատիկայի ընդլայնմամբ, գրաքննական կապանքներից ազատ արտահայտվելու հնարավորությամբ։

Արևմտահայ ռեալիզմի այս նոր շրջանը, որին ուղղություն տվողը արդեն ոչ թե Արփիարյանն էր, այլ Արշակ Չոպանյանը, քիչ է զբաղեցրել մեր գրականագետներին, մինչդեռ այն առատ նյութ կարող է տալ հետազոտողներին։ Այս նոր շարժման մեջ մենք տեսնում ենք արևմտահայ ականավոր բոլոր գրողներին՝ Տ. Կամսարական, Ե. Օտյան, Լևոն Բաշալյան, Միքայել Կյուրճյան, Երուխան, Վահան Թեքեյան, Վահան Մալեզյան և այլն, համախմբված Արշակ Չոպանյանի «Անահիտի» շուրջը։

1 Այդ աշխատության վերամշակված ու լրացված օրինակը տպագրվել է 1967 թ. Երևանի պետական համալսարանի հրատարակությամբ։

Բացի վերևում թվարկված գրողներից «Անահիտին» աշխատակցել են Զիֆթե Սարաֆը, Թլկատինցին, Ռուբեն Սևակը, Դանիել Վարուժանը, Սիամանթոն, արևելահայ գրողներից՝ Ալ. Շիրվանդադեն, Հովհ. Հովհաննիսյանը, Ավ. Իսահակյանը, Ալ. Ծատուրյանը, Դերենիկ Դեմիրճյանը:

Հայաստանի գրականության և արվեստի թանգարանում, Ա. Զոպանյանի ֆոնդում պահվող բազմաթիվ նամակներ վկայում են, թե Զոպանյանը որքան է օգնել մասնավորապես երիտասարդ ուժերի գրական զարգացմանը: Ուսուցանողի այդպիսի հոգատար վերաբերմունք է ունեցել նա, օրինակ, Դանիել Վարուժանի նկատմամբ, ամեն մի երկի տպագրությանից առաջ գրավոր հայտնելով իր կարծիքը, դիտողությունները:

Զոպանյանի նպատակն է եղել «Անահիտը, ծառայեցնել ընթերցողների մտավոր մակարդակի բարձրացմանը, նրանց հաղորդակից դարձնել համաշխարհային գեղարվեստական մտքի արտահայտություններին: Նա տպագրել է անտիկ շրջանի և հետագա դարերի դասական գրականության շատ նմուշներ, ինչպես էսքիլեսի «Պարսիկները», «Պրոմեթեոս շղթայվածը», Շեքսպիրի «Անտոնիոս և Կլեոպատրա» ողբերգությունը, Գյոթեի «Հերման և Տորոթեան», Ֆլոբերի «Հերովդեսան» և տասնյակ այլ գրողների երկեր, այդ թվում պարսկական գրականությունից (Օմար խյամ, Ֆիրդուսի, Հաֆրզ և այլն): Տպագրել է հոգվածներ ֆրանսիական, ռուսական, անգլիական գրականության ականավոր ներկայացուցիչների մասին:

Հայտնի է, որ Ա. Արփիարյանը, Լ. Բաշալյանը, հետագայում Ե. Օտյանը և ուրիշներ ծրագրված աշխատանք էին կատարում արևմտահայ գրականությունը գեթ մասամբ ֆրանսիական ազդեցությունից ազատելու, դեպի ռուսական ռեալիզմը մղելու ուղղությամբ. նրանք հոգվածներով և թարգմանություններով իրենց ընթերցողներին ծանոթացնում էին Դոստոևսկուն, Տոլստոյին, Պուշկինին, Լերմոնտովին, Տուրգենևին, Գոնչարովին:

Զոպանյանն «Անահիտում» նվազ դեր չի կատարել այս ուղղությամբ: Նա բազմաթիվ առիթներով անդրադարձել է ռուսական գրականությանը, տպագրել Պուշկինից և այլ գրողներից կատարված թարգմանություններ: Պուշկինին նվիրած հատուկ հոգվածում, ջերմորեն խոսելով մասնավորապես նրա աղատամիտ գաղափարների մասին, նրան համարում է «ճշմարիտ ռուս գրականության ռահվիրան», «ռուս գրական լեզուն ստեղծողն» ու «գեղարվեստական բարձրագույն կատարելության հասցնողը»²:

Ուշագրավ է նրա բնութագիրը Դոստոևսկու մասին. «Դոստոևսկի, թեպետ կնկարագրե միայն ռուսական կյանքը, կարտահայտե ամբողջ մարդկության տառապանքը՝ բռնության, տգիտության, նախապաշարման, ախտերու, կյանքին ընկերական ու բնական բոլոր շարիքներուն բազմապատիկ բեռին տակ»³:

Արևմտահայ իրականությունում Զոպանյանը առաջիններից էր, որ «Անահիտ» հանդեսում տպագրեց Մաքսիմ Գորկու հայտնի նամակը՝ գրված 1905 թ. հայ-թուրքական ընդհարումների առիթով:

Վերջապես շատ բնութագրական է այն ընդհանուր կարծիքը, որ նա տվել է առհասարակ ռուս գրականությանը, նրա մեջ տեսնելով «վեհանձն գթության ոգի», «մարդկային լայն եղբայրության մը բուռն ծարավը, բացարձակ

² «Անահիտ», 1899, թիվ 9—10:

³ Նույն տեղում:

արդարության բաղձանքը, կյանքի ուղղակի դիտողության պարզ ու հավատարիմ արտահայտության ձգտումը, արվեստը, առանց արվեստականության»⁴։

Լինելով լայն գիտելիքների տեր անձնավորություն, քաջատեղյակ հայ և համաշխարհային արվեստի նվաճումներին, Չոպանյանն իր պարբերականում լայն տեղ է տվել արվեստի տարբեր ճյուղերին՝ նկարչություն, քանդակագործություն, երաժշտություն, թատրոն, ճարտարապետություն։ Այդ հանդեսում են լույս տեսել Թ. Թորամանյանի արժեքավոր ուսումնասիրությունները հայ հին ճարտարապետության, Գ. Հովսեփյանի հողվածները հայ մանրանկարչության, իր և այլ մասնագետների տասնյակ հողվածները Կոմիտասի, Ա. Շահմուրադյանի, Ալ. Սպենդիարյանի, էդգար Շահինի և այլ նկարիչների, դերասան-դերասանուհիների, կոմպոզիտորների մասին։ «Անահիտում» են տպագրվել դերասանուհի Ազնիվ Հրաչյայի արժեքավոր հիշողությունները, գրված Հովհ. Թումանյանի հորդորով, Հիպպոլիտ Տենի «Հունական քանդակագործությունը», Ռ. Թալասոյի «Թուրքական թատրոնը», Տուրգենևի «Համլետը և Դոն Կիխոտը» և այլն։

Այս բոլորով հանդերձ՝ «Անահիտի» դեմքը որոշողը եղել է նրա անխոնջ խմբագիրը, որը գործել է մեն-մենակ, չունենալով խմբագրական մնայուն աշխատակիցներ, առհասարակ խմբագրական մարմին՝ այժմյան հասկացողությամբ։ Նա իր պարբերականի յուրաքանչյուր համարում գրել է ընդարձակ առաջնորդող հողվածներ հայ հասարակական, քաղաքական, մշակութային կյանքին վերաբերող հարցերի մասին։ Գրել է հանդեսի լրատու բաժինը՝ քրոնիկները, արևմտահայերի մոտ զարգացած գրական մի սեռ, որին Չոպանյանը տվել է գեղարվեստական դրոշմ։ Սեղմ, բնութագրական ոճով շարադրված այդ քրոնիկները հանդիսանում են հայ հասարակական, մտավոր կյանքի յուրահատուկ և շատ հավաստի տարեգրությունը, որտեղ օրը օրին արձանագրված ենք գտնում ժամանակի գրական, գեղարվեստական, կրթական, քաղաքական կյանքի էական երևույթները, գրախոսություններ՝ լույս տեսած գրքերի մասին, կյանքից հեռացած գործիչների մահախոսականներ, — որոնք երբեմն բարձրանում են գրական դիմանկարի մակարդակի, — հակիրճ լուրեր՝ ցուցահանդեսների, գրական երեկույթների, առհասարակ մշակութային իրադարձությունների մասին։

Բացի այս երկու հիմնական բաժիններից, Չոպանյանը «Անահիտի» շատ համարներում տպագրել է բանասիրական ծավալուն հողվածներ, թարգմանական երկեր։

Քաղաքական որոշ հարցերում, մասնավորապես գործունեության առաջին տարիներին, Չոպանյանն ունեցել է տատանումներ, սխալներ, հույսեր է կապել Եվրոպայի միջամտության հետ, բայց էական շատ հարցերում կանգնած է եղել ճիշտ դիրքերում։ Նա ողջունել է Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը։ 1917 թ. Վ. Բրյուսովին գրած նամակում նա ասում է. «Աղատության մուտքը Ռուսաստան, ինձ ուրախությամբ է լցնում։ Դա պատմության մեծագույն և երջանկագույն իրադարձությունն է՝ ֆրանսիական հեղափոխությունից հետո։ Փառք մարդկության տարեգրության մեջ այդ փառավոր էջը գրած ոուս ազնիվ ժողովրդին»⁵։

⁴ Նույն տեղում, 1909, թիվ 1—2։

⁵ Տե՛ս Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Չոպանյանի ֆոնդ։

Հայաստանում սովետական կարգերի հաստատման առաջին օրվանից Ջոպանյանը դարձել է նրա ամենաչեղացի պաշտպանը սփյուռքում։ Դրա փայլուն ապացույցն է հայրենանվեր այն աշխատանքը, որ նա կատարել է տարիների ընթացքում՝ «Անահիտի» էջերում արտացոլելով Սովետական Հայաստանի տնտեսական, մշակութային նվաճումները, արտատպելով սովետահայ գրողների բազմաթիվ երկերը։

* * *

Ասացինք, որ Ջոպանյանը, որպես ականավոր գրող, արժանի տեղ ունի արևմտահայ իրապաշտ գրական շարժման մեջ։ Նրա անվան հետ է կապվում մասնավորապես ռեալիստական չափածոյի զարգացումը։

Ջոպանյանի առաջին գրքի՝ «Արշալույսի ձայների» մասին Ա. Արփիարյանը գրել է. «Արշակ Ջոպանյանի գրվածքներուն մեջ կսիրեմ ամենեն ավելի իր բնականությունը. կեղծիք չկա, ինչ որ կզգա, նույնը կգրե... շատ անկեղծ է, ինչպես նաև շատ մանրազնին դիտող մըն է, բայց կփափաքեի, որ նկարագրություններուն մեջ ամենաճարտար լուսանկարիչ մը ըլլալու տեղ ըլլար ամենաճարտար պատկերահան մը, լուսանկարիչը ճիշտ ու ճիշտ կնկարե, պատկերահանը թերևս քիչ մը ձշտութենե կհեռանա, բայց նկարներուն մեջ իր սրբտեն կղնե բան մը, որ կլրացնե նույնիսկ բնության մոռցածը»⁶։

«Արշալույսի ձայները» որպես գրական նորություն է ընդունել նաև բանաստեղծ Հովհ. Հովհաննիսյանը. «Կարգացեք այդ գիրքը, — գրել է նա, — և կտեսնեք որ այդ ծայրե ի ծայր զգացմունք է, հուզում է, որ շարժում է ընթերցողի սրտի թելերը... քանի՞ հեղինակ, կամ ավելի ճիշտ՝ քանի՞ գրվածք կարող ենք ցույց տալ մեր մեջ, որից անհատական ներքին կյանքի այն բուրմունքն առնենք, որ մեզ հասնում է Բոսֆորի գեղածիծաղ ամպերից... Որքան լույս, որքան ջերմություն, ինչ գարուն է որ բուրում է այս գիրքը... Ամենայն ինչ այստեղ ինձ համար մարդկային է ու իմ սրտի մոտ ու հասկանալի»⁷։

Ջոպանյանի այս գրքում զետեղված չափածո երկերի վրա նկատվում է դուրյանական ոռոմանտիզմի տաք շունչը, տեղ-տեղ սերը շատ է անիրական, եթերային, բայց ընդհանուր առմամբ «Արշալույսի ձայներում» զգացվում էր իրական կյանքի զարկերակը։

Ջոպանյանը «Մութ խավեր» պիեսով իր արժանի տեղն էր գրավում 80-ականների գրական շարժման մեջ որպես դրամատուրգ։ Գրիգոր Զոհրապը, Ա. Արփիարյանը, Լ. Բաշալյանը հենց այդ տեսանկյունով են արժեքավորել վերոհիշյալ պիեսը, տալով նրան արժանիքից բարձր գնահատական, քաջալերելու համար հեղինակի ջանքերը դրամատուրգիայի բնագավառում։ Նրանք այդ գործը համարել են ոռոմանտիզմից դեպի ռեալիզմ անցնելու ձախապարհին կանգնեցված մի սահմանաքար, որը «երկու ուղիներու վիրար կտրածները կանգուն սլաքով մը ցույց կուտա ճամփան, ուսկից եկած են, և այն, որուն հետևելու է»⁸։ Միաժամանակ նրանք ողջունել են այդ երկի սոցիալական բովանդակությունը, «օրվան հացին դժնդակ պայքարը» ցուցադրելու միտումը։

⁶ «Հայրենիք» օրաթերթ, Կ. Պոլիս, 1891, N 123։

⁷ Հովհ. Հովհաննիսյան, Երկերի ժողովածու, հատ. 3, Երևան, 1965, էջ 174—183։

⁸ «Հայրենիք», 1893, թիվ 168։

1895—1896 թթ. քաղաքական դեպքերը Չոպանյանին մղեցին դեպի հայ ժողովրդի տառապալից կյանքի անդուլտարձր:

Նա իր ստեղծագործության նյութ դարձրեց մեր ժողովրդի ճակատագիրը. նրա տնտեսական ու քաղաքական վիճակը:

Փարիզում, գրաքննական խստություններից ազատ, գրեց գեղարվեստական նոր երկեր՝ «Օրոր մայր Հայաստանի», «Փոքրիկ հայ գեղջուկին պատահարը», «Գեղուն ի պատիվ հայ լեզվի» և այլն, որոնք նշանավորում էին հեղինակի գրական զարգացման մի նոր աստիճանը: Դրանցից առաջինը դարձավ դասագրքային նյութ, եղանակավորվեց ու երգվեց երեկույթ-ցերեկույթներում: Ինքնատիպ գործ էր «Փոքրիկ հայ գեղջուկին պատահարը», որը հետագայում թարգմանվեց և լույս տեսավ նաև ֆրանսերեն: Դա տառապած, բոլորի կողմից անիրավված հայ ժողովրդի ծառացումն է անգո աստծո դեմ, բացահայտումը եկեղեցական այն խաբկանքի, թե այս աշխարհում տառապող, տուժող մարդիկ հանդերձյալ կյանքում պիտի վարձատրվեն, թե անհիշաչար է աստված: Չոպանյանի հերոս աստվածը ամենահիշաչարն է և պաշտպան ոչ թե հալածյալների ու ղրկյալների, այլ հարուստների ու բռնապետների: Գրված է բանաստեղծական ջերմ շնչով, խոր հուզականությամբ, կուռ ու պատկերավոր լեզվով ու այսօր էլ կարող է համարվել հայ գեղարվեստական արձակի լավագույն նմուշներից մեկը:

Չոպանյանի գրական հասունացման արտահայտությունն էր բանաստեղծությունների այն նոր ժողովածուն, որ լույս տեսավ Փարիզում, 1908 թ.՝ «Քերթվածներ» խորագրով և պարունակում էր 1889—1907 թթ. չափածո ստեղծագործությունները: Գրքի կեսից ավելին վաղ շրջանում, այսինքն համիդյան բռնապետության տարիներին գրված ոտանավորներն էին, բայց մյուս կեսը, հղացված փարիզյան շրջանում, նորություն էին թե՛ իրենց գեղարվեստական առանձնահատկություններով, թեմատիկայի բազմազանությամբ և թե՛ գաղափարական հենքով:

Այդ հատորին վիճակվեց երջանիկ ճակատագիր, Պոլիս հասավ ճիշտ այն ամիսներին, երբ նոր էր հռչակվել օսմանյան սահմանադրությունը, և մարդիկ օրորվում էին ազատության խաբուսիկ պատրանքի երազներով: Չոպանյանի անունը, որ 12 տարի արգելված էր Թուրքիայի սահմաններում, — ինչպես արգելված էին քաղաքական մյուս տարագիրների անունները, — այժմ անցնում էր թերթից թերթ, արտատպվում էին վերոհիշյալ գրքի շատ բանաստեղծությունները, արտասանվում երեկույթ-ցերեկույթներում, երգվում: Ռ. Զարդարյանի «Մեղրագետ», Ա. Անտոնյանի «Գանձարան», Հր. և Զ. Ասատուրի «Թանգարան» և այլ դասագրքերում զետեղվում են նմուշներ Չոպանյանի արձակ և չափածո գործերից, նրան ներկայացնելով «մեր աշխարհիկ գրականության ամենեն բազմարդյուն դեմքերեն մեկը»⁹:

Արևմտահայ գրականության պատմաբաններից Հ. Ս. Երեմյանը, Հ. Օշականը և ուրիշներ Չոպանյանին նվիրած իրենց ընդարձակ հոդվածներում նրան գնահատում են նույն տեսանկյունից: Երեմյանը, խոսելով նրա արձակի մասին՝ որպես իրական կյանքի հարազատ արտացոլման, ասում է թե Չոպանյանը իր գրական գործունեության առաջին տարիներից հակում է ունեցել դեպի իրապաշտ ուղղությունը: Օշականը դրում է. «Իրապաշտ շարժումին լիու-

9 Ա. Անտոնյան, Գանձարան, բարձրագույն դասընթաց, Կ. Պոլիս, 1920, էջ 30:

թյանը մեջ իր տաղանդը կազմավորող այս պատանին սխալ չըլլար ընդունիլ մանրանկար արևմտահայ գրականություն մը», «այս շարժումին մեջ Չոպանյան ոչ միայն ղսպանակ, այլև գահավորակ է նույն ատեն»։ «չէ սկսած անշուշտ, մեր քնարերգությունը, բայց իրմով մեր քերթողական թեքնիքը նկարագիր կփոխե, ինչպես նաև անոր հղանցքը»¹⁰։

Չոպանյանի քնարական արվեստին բարձր գնահատական են տվել նաև օտար ականավոր մտածողներ, կարդալով նրա ստեղծագործությունների ֆերանսերեն թարգմանությունը։ Հիշատակության արժանի են էմիլ Վերհարնի, Ժան Լահուրի հիացական գնահատականները¹¹։

* * *

Չոպանյանը նշանակալից ազդեցություն է թողել արևմտահայ թե՛ գեղարվեստական գրականության, և թե՛ քննադատական մտքի վրա։ Նա, առաջինը իր գրչակից ընկերների մեջ, ցույց է տվել գեղարվեստական երկր խորքում, գեղագիտական ընկալումով ու քննական մոտեցմամբ արժեքավորելու օրինակը դեռևս իր առաջին գրախոսություններում, ինչպես Սիպիլի «Աղջկան մը սիրտը» վեպին նվիրված գրադատականում, որ ղետեղել է նաև «Արշալույսի ձայներում»։

Հնարավոր է Չոպանյանի որոշ դրույթները չընդունել այսօր, օրինակ առարկել Հ. Պարոնյանին նրա տված գնահատականի դեմ, բայց անհնար է չընդունել, որ հենց Պարոնյանին նվիրված և դեռևս 1895 թ. տպագրված այդ հոդվածն էլ աչքի է ընկնում երգիծաբանին իր գեղագետի կարողության մեջ տեսնելու, նրա ազդեցության շրջանակները որոշելու, ստեղծագործական ինքնատիպությունը բացահայտելու քննական ոգով։

Չոպանյանը տարիների ընթացքում «Անահիտում» տպագրել է տասնյակ դիմանկարներ տարբեր գրողների, արվեստագետների մասին։ Դրանց մի մասը հետագայում ամփոփել է «Դեմքեր» խորագիրը կրող երկու հատորների մեջ¹²։

Բավական է մի ակնարկ գցել այդ դիմանկարների ցանկի վրա, նկատելու համար հեղինակի նախասիրությունների շրջանակը. Գրիգոր Նարեկացի, Մխիթար Սեբաստացի, Խաչատուր Աբովյան, Ղևոնդ Ալիշան, Արսեն Այտրնյան, Գաբրիել Սունդուկյան, Ալ. Շիրվանղաղե, Հ. Պարոնյան, Կոմիտաս, Պետրոս Աղամյան, Դանիել Վարուժան և ուրիշներ։

Նա այդ հեղինակներին չի ներկայացրել նկարագրական սովորական էջերով, քննական մոտեցում է ցուցաբերել յուրաքանչյուր դեպքում, անկախ այն հանգամանքից, թե ում մասին է դրել։ Գիտական անաչառությամբ փորձել է ցույց տալ նրանց տեղը հայ մշակույթի պատմության մեջ, նրանց ստեղծագործական առանձնահատկությունը։

Չոպանյանին ենթ պարտական միջնադարյան գրականության ականավոր դեմքերից մեկի՝ Գրիգոր Նարեկացու վերադնահատումը։ Դեռևս 1895 թ., վերլուծման ենթարկելով «ԼՄատյան ողբերգության» գիրքը, թարգմանաբար էլ

¹⁰ Հ. Օշական. Համապատկեր արևմտահայ գրականության, հատ. 5, Երուսաղեմ, 1952, էջ 305—307։

¹¹ Գ. Ֆենելսյան, Արշակ Չոպանյան, կենսագրական և մատենագրական նոթեր, Փարիզ, 1938, էջ 49։

¹² Ա. Չոպանյան, Դեմքեր, հատ. Ա, Փարիզ, 1924, հատ. Բ, 1929։

իր ընթերցողներին ներկայացնելով նարեկի բնորոշ մի քանի էջերը, նա ցույց տվեց այդ երկի մեջ իրական կյանքի իրապաշտ պատկերումը՝ խորապես ժողովրդական պատկերներով. «Հպարտությամբ, ուրախությամբ և հիացմամբ ողջունենք ղանիկա,— գրել է Չոպանյանը այդ հոդվածում,— մեր գրականության տիտանը, մեր ցեղին էն ուժով արտահայտությունն է ան: Հանենք ղանիկա աղոթք գրողի կրոնական գույնեն, ուր սահմանափակված էր, և դնենք յոր տեղը, գրական մեծ հանճարներու օղակարկառ բարձունքին մեջ»¹³:

Նա ի. Աբովյանի մասին գրել է 1898 թ.՝ մեծ լուսավորչի անհայտացման 50-ամյակի առիթով: Ավելի քան 70 տարի անց այժմ այդ դիմանկարը աչքե անցկացնողը կարող է տեսնել, թե որքան ճիշտ է թափանցել Չոպանյանը Աբովյանի ստեղծագործության էության մեջ և հասկացել այն մեծ դերը, որ կատարել է Աբովյանը հայ նոր գրականության սկզբնավորման, աշխարհաբարը գրական լեզու դարձնելու, լուսավորական գաղափարների տարածման գործում: Ընդամենը մի քանի էջում զարմանալի խիտ ոճով ուրվագծել է «Վերք Հայաստանի» վեպի արժանիքները, այն դիտելով որպես հայ ժողովրդի հավաքական մտայնության ու զգացողության, նրա տառապանքի ու ազատագրական ձգտումների խտացումը, միաժամանակ հայ ժողովրդի մտավոր ու քաղաքական զարթոնքի շեփորահարումը: «Վերք Հայաստանի» վեպը ժողովրդական դյուցազներգություն համարող Չոպանյանը վեր է հանում նրա այն արժանիքները, որոնք այժմ էլ չափանիշ են Աբովյանի գնահատման համար, այսինքն նրա գրականության ժողովրդայնությունը, գաղափարախոսության խոր դեմոկրատիզմը: «Աբովյան ժողովուրդի ձայնը եղավ,— ասում է Չոպանյանը,— ուղեց լույս տանիլ խոնարհ խավերու մեջ»: Այդ վեպում,— շարունակում է նա,— «ժողովրդի կյանքը կբաբախե ու կտառապի, ու կհեռ, արտահայտված այնպես, ինչպես ժողովուրդը կխոսի, բայց արտահայտված այնպիսի հոգիի մը մեջեն, որ ինքը մինակը ավելի ընդարձակ կըզգա, քան ժողովուրդ մը մեկեն... Աբովյանի ոճը բացարձակապես անձնական է, մոլեգնաբար արևելածև և հայադրոշմ: Անոնք, որ կկարծեն թե հայ ոճ մը գոյություն չունի, թող Աբովյանը մոտեն ուսումնասիրեն: Գր. Նարեկացվո հետ Աբովյան ամենեն զուտ ու հզոր ներկայացուցիչն է հայ զգայնության, հայ քնարերգության, հայ բացատրության»¹⁴:

Չոպանյանը բարձր գնահատական է տվել նաև Գ. Սոսնդուկյանին, նրան իրավացիորեն համարելով հայ ռեալիստական դրամատուրգիայի հիմնադիրը, որի ձգտումն է «կյանքի հարազատ ցոլացումը»¹⁵:

Չոպանյանը գրել է ծավալուն մենագրություններ Պետրոս Դուրյանի և Մկրտիչ Պեշիկթաշլյանի մասին: Առաջինը լույս է տեսել 1894 թ., երկրորդը՝ մեկ տասնամյակ անց: Երկու դեպքում էլ հեղինակը մեզ ներկայանում է ամենից առաջ խորապես քննական մոտեցում ցուցաբերող գրականագետ: Այդ գրքում կան հատվածներ, մասնավորապես Դուրյանի հիվանդության և մահվան օրերի նկարագրությունները, որոնք ունեն գեղարվեստական ստեղծագործության դրոշմ և որպես այդպիսին էլ, տարիներ շարունակ զետեղվել են դասագրքերում: «Մկրտիչ Պեշիկթաշլյան» աշխատությունը գրված է ավելի հա-

¹³ «Ծաղիկ», կիսամյա հանդես, 1895, թիվ 5, նույնք՝ «Գրական դեմքեր», հատ. Ա, էջ 27:

¹⁴ «Անախտ», 1898, թիվ 2, նույնը՝ «Գրական դեմքեր», հատ. Ա, էջ 62, 72:

¹⁵ «Գրական դեմքեր», հատ. Ա, էջ 155:

սուն տարիքում, նոր տպավորությունների, ընկալումների, հայ ժողովրդի հետ պատահած դժբախտ իրադարձությունների ազդեցության տակ: Եթե նախորդ աշխատության մեջ զուգորդված ենք գտնում գրողն ու գրականագետը, ապա այստեղ երևում է գրականագետն ու պատմաբանը: Պեշիկթաշլյանին ժամանակի գրական, մասնավորապես թատերական մթնոլորտում ներկայացնող հեղինակը լայնորեն քննության է առնում XIX դարի կեսերին հայ իրականությանը հուզող բազմաթիվ հարցեր, ինչպես Հասունյան—հակահասունյան պայքարի հարցը:

Այս գիրքը իր կառուցվածքով, կուռ ու տրամաբանական ոճով, քննական մոտեցմամբ, գեղարվեստական ստեղծագործությունների վերլուծման հմտությամբ հայ մենագրական գրականության առաջին և հաջողված նմուշներից մեկը կարելի է համարել:

Չոպանյանը նշանակալից դեր է կատարել միջնադարյան հայ տաղերգուների ստեղծագործությունների հայտնաբերման, հետազոտման ու հրատարակման ուղղությամբ: Չհաշված այն տասնյակ հոգվածները, որոնք մնացել են «Անահիտի» էջերում, հրատարակել է հայերեն և ֆրանսերեն մի շարք գրքեր, որոնք 1900-ական թթ. սկզբներից գրավել են հայագիտական մտքի ուշադրությունը:

Հայերեն գրքերն են.

1. «Նահապետ Քուչակի դիվանը» — սիրո երգեր, խրատական և այլաբանական երգեր, պանդուխտի երգեր (Փարիզ, 1902):

2. Նաղաշ Հովնաթանի աշուղը և Հովնաթանյան նկարիչը (Փարիզ, 1910):

3. Հայ էջեր (Փարիզ, 1912):

4. Հայրեններու բուրաստանը (Փարիզ, 1940): Պարունակում է նախորդ ժողովածուների հիմնական ատաղձը՝ նկատելի հավելումներով, ընդարձակ առաջաբանով:

Բանասիրությունը Չոպանյանի գրական գործունեության էական կողմերից մեկն էր, բայց ոչ միակը: Նա հետազոտության նյութ դարձրեց հայ միջնադարյան գրականության, մասնավորապես չափածո գրականության աշխարհիկ հատվածը: Մխիթարյաններից ամենից վաստակաշատը՝ Ղ. Ալիշանը, պատրաստել է աշխարհիկ երգերի տաղարան, բայց չի տպագրել՝ «անշուշտ կրոնավորի պարկեշտությունը հարգելու համար», ինչպես վկայում է նույն միաբանության մի այլ անդամը՝ իր աշխարհիկ հակումներով հայտնի Ս. Երեմյանը, որը Չոպանյանին նվիրված դիմանկարում ուղղակի գրել է. «Պ. Չոպանյան ծովածալալ ազատամտությամբ ի վիճակի է քննադատելու, գնահատելու մեր աշուղային գրականությունը, աղատ է առանց կաշկանդումի արտատպելու սիրահարական և հովվերգական պատառիկները, մինչդեռ վանական բանասերը այդ մասին սահմանափակված կգտնե իր ազատությունը»¹⁶:

Չոպանյանից առաջ էլ, Նահապետ Քուչակի, Նաղաշ Հովնաթանի, Ֆրիկի և այլ տաղերգուների ու աշուղների անունները հայտնի էին: Տարբեր երգարաններում, ժողովածուներում տպագրվել էին նմուշներ մեր միջնադարյան չափածո գրականությունից: Այդ ուղղությամբ նկատելի դեր էին կատարել Ա. Տեկանցը, Կ. Կոստանյանը իրենց հրատարակած ժողովածուներով, սա-

¹⁶ Ս. Երեմյան, Աղգային դեմքեր, Գրազետ հայեր, 8-րդ շարք, Վենետիկ, 1914, էջ 426:

կայն առաջինը Չոպանյանն էր, որ հատուկ հետաքրքրություն առաջացրեց մեր միջնադարյան գրականության այդ գոհարների շուրջը:

Քուչակի անձնավորության վավերականությունը այժմ էլ կարող է վիճելի հարց լինել, մտքեր հուզել, մանավանդ որ Չոպանյանի ընդդիմախոսների թվում է այնպիսի ականավոր մի հայագետ, ինչպիսին Մ. Աբեղյանն է, «բայց և այնպես,— վկայում է նույն Աբեղյանը,— այդ տաղերն ընդարձակ շրջանի հասարակության ծանոթացնողը եղել է նա», միաժամանակ նա է եղել «նահապետ Քուչակի համբավի տարածողը»¹⁷:

Նույնը պետք է ասել նաղաշ Հովնաթանի մասին: Նրա ժառանգության գիտական ամբողջական հրատարակությունը իրագործվեց մեր օրերում, սակայն դարձյալ առաջինը Չոպանյանն էր, որ առանձին ժողովածուի մեջ ափսոսանքով նրա տաղերը, լույս ընծայեց հետազոտական ներածությամբ:

Չոպանյանին զբաղեցրել է նաև Ֆրիկի ժառանգության հարցը. նա հավաքել է նյութեր, արտագրել նրա տաղերից նմուշներ և տպագրել «Անահիտում», «Հայ էջեր» ժողովածուում, փորձելով տալ նրա արժեքավորումը, սակայն խմբագրական բազմազբաղ վիճակը հնարավորություն չի տվել ամբողջովին նվիրվել այդ գործին, պրպտել աշխարհի տարբեր գրադարաններում պահվող հայերեն ձեռագրերը, հավաքել բոլոր տաղերը և հրատարակել. ծանր մի աշխատանք, որ նրա խորհրդով կատարեց Տիրայր վարդապետը, դրան նվիրելով գիտակցական մի ամբողջ կյանք¹⁸:

Չոպանյան-թարգմանիչը նույնպես խոշոր դեր է խաղացել հայ իրակա-նության մեջ: Երկու լեզունեռով ստեղծագործող գրողը ֆրանսերենից թարգմանել է շատ երկեր, գերազանցապես գեղարվեստական ստեղծագործություններ, նաև արվեստաբանական գործեր, քաղաքական հոդվածներ: Կարևոր թարգմանություններից են՝ Անատոլ Ֆրանսի «Էպիկուրի պարտեզները», Հիպոլիտ Տենի «Գեղարվեստի փիլիսոփայության» ընդարձակ զուխներից մեկը, տարբեր երկեր՝ Վ. Հյուգոյից, Պոլ Վեռլենից, Շ. Բոդլերից, Ալֆրեդ դը Վի-նիեից և ուրիշներից:

Ավելի նշանակալից է հայերենից ֆրանսերեն նրա կատարած թարգմանական աշխատանքը, որի շնորհիվ նա Եվրոպային ծանոթացրել է հայ հին և նոր գրականության շատ նմուշներին:

Նման փորձեր նա կատարել է դեռևս աշակերտական տարիներից: 1890 թ. նա «Պլեադ» ֆրանսերեն գրական հանդեսում տպագրել է Պետրոս Դուրյանից իր կատարած թարգմանությունները, որոնք մեծ հետաքրքրու-թյուն են առաջացրել օտար շրջաններում: Հետագայում հայ գրականությունից թարգմանել է շատ երկեր, հրատարակել ֆրանսիական մամուլում կամ առանձին գրքերով, ինչպես Ալ. Շիրվանզադեի «Ցավագարը», Ռ. Զարդարյանի հեքիաթներից մի քանիսը և այլն: Ֆրանսերեն թարգմանությամբ լույս է ընծայել նաև իր արձակ և շափածո երկերից լավագույնները տարբեր ժողովա-ծուներով՝ «Պոեմներ» (1908), «Կյանք և երազ» (էմիլ Վերհարնի առաջաբա-նով, 1914), «Տղու հոգիներ» (1926) և այլն:

Չոպանյանի անունը գիտական աշխարհում հռչակողները, այդ անվան հետ միասին հայ գրականության գոհարները աշխարհին ծանոթացնողները:

17 Մ. Աբեղյան, Հին գուսանական ժողովրդական երգեր, Երևան, 1931, էջ 7:

18 Տիրայր արքեպիսկոպոս, Ֆրիկ—Դիվան, Նյու Յորք, 1952, էջ 15:

եղան հայ միջնադարյան տաղերը պարունակող նրա ֆրանսերեն ժողովածուները.

1. Poètes Arméniens anciens et modernes («Հին և նոր հայ բանաստեղծներ»): Գաբրիել Մուրեի ներածական հոդվածով (Փարիզ, 1902):

2. Chants populaires Arméniens («Հայկական ժողովրդական երգեր», Փարիզ, 1903). արժանացել է ֆրանսիական ակադեմիայի մրցանակին:

3. Les Trouvères Arméniens («Հայ աշուղներ», Փարիզ, 1906):

4. La Roseaie d'Arménie («Վարդենիք Հայաստանի», հատ. II, Փարիզ, 1918, հատ. Բ, 1923, հատ. Գ, 1929):

Վերոհիշյալ ժողովածուները պարունակում են 'րիգոր Նարեկացու, Նահապետ Քուչակի, Նաղաշ Հովնաթանի, Ֆրիկի, Առաքել Սյունեցու, Հովհաննես Երզնկացու, Կոստանդին Երզնկացու, Հովհաննես Թլկուրանցու, Սայաթ Նովայի և տասնյակ այլ տաղերգուների, աշուղների, նաև նոր շրջանի գրողների երկերը:

Ինչպես ցույց են տալիս ֆրանսիական մամուլում տպագրված հոդվածները, Չոպանյանը այս պատվավոր ու շնորհակալ աշխատանքը կատարել է պատասխանատվության խոր գիտակցությամբ, սիրով ու համբերատարությամբ, հասնելով բնագրի բույրը տալու առավելագույն հնարավորության: Այս բնագավառում արդեն նա չի ունեցել իր մրցորդը թե՛ քանակային իմաստով, և թե՛, մանավանդ, որակով:

Չոպանյանը թարգմանական հատորները, մասնավորապես «Վարդենիքը» օժտել է թե՛ հմտալից առաջաբանով, և թե՛ հայ մանրանկարչությունը, քանդակագործությունը, նարտարապետությունը ներկայացնող նկարներով, որոնք ստեղծել են մթնոլորտ, ցուցադրել են հայ մշակույթը իր բոլոր ոլորտներով:

Այս ժողովածուները Չոպանյանին դարձրել են մեծ հեղինակություն ամբողջ Եվրոպայում, հավաստի մի կենտրոն, որին դիմել են հարյուրավոր մարդիկ հայ ժողովրդի մշակույթի հետ կապված հարցերով: Հայաստանի գրականության և արվեստի թանգարանում պահվող Չոպանյանի արխիվի հաղարավոր նամակները ցույց են տալիս, թե ինչպիսի լայն կապեր է ունեցել նա բաղմաթիվ գրողների, հրապարակախոսների, հայագետների, քաղաքական գործիչների հետ:

Չոպանյանի թարգմանությունների մասին օտար մամուլում տպագրված դրական գրախոսություններից հնարավոր է ստեղծել հարուստ մի ժողովածու: Նկատի ունենալով, որ դրանք որքան թարգմանչի աշխատանքի գնահատումներն են, նույնքան, գուցե ավելի, մեր գրականության արժեքավորումները, ավելորդ չենք համարում մեջ բերել մի քանի նմուշ:

Ժան Մորեասը, օրինակ, գրել է. «Նահապետ Քուչակի սիրային քառյակները կիստացնեն Արևելքի ամբողջ հրապույրն ու տկարությունը»: Մի այլ ֆրանսիացի վկայում է. «Կհասնինք վերջապես Նահապետ Քուչակին՝ պ. Արշակ Չոպանյանի մեղի ծանոթացուցած բանաստեղծներուն ամենեն աստվածայինին... Նահապետ Քուչակ ինծի շատ բարձր կթվի Օմար Խայամեն: Համակ սեր է ան, անոր տաղիկները երբեք չեն ձանձրացներ, ու պատկերները իրմե կծնին, ինչպես ծաղիկները վարդերեն»:

Պոլ Ագանը «Հայ ժողովրդական երգեր» ֆրանսերեն ժողովածուի առաջաբանում գրել է. «Մի ամբողջ ժողովրդի կենդանի մարմինն է բաբախում այստեղ»: Գուստավ Շլյուսերը «Վարդենիք Հայաստանի» ժողովածուի Գ հա-

տորի մասին ասել է. «Ատիկա հոյակապ նւթաստ մըն է ծանոթացմանը՝ այն-քան նրբարվեստ, այնքան այլազան, գեղեցկագիտական գործին, զոր ստեղծած է հայ հանճարը: Մարդ հիացմամբ կհամակվի, կարդալով ժողովրդական լեզվով շարադրված այդ բանաստեղծությունները, որոնց հնագույնները XI դարեն են, այդ հին, անանուն բերվածները, որոնք կմոգեն ընթերցողը իրենց պարզ, խորունկ և այնքան անկեղծ ներշնչումով, իրենց բնական շնորհովը և ինքնատիպություններու ամենեն համեղովը»¹⁹:

Կամիլ Մոկլերը նույն ժողովածուի մասին գրել է. «Հոն կգտնենք կարծրությունները, խստությունները, մեկամաղձությունները մեր «Ռուլանի երգի», մեր հին տաղերու, մեր միջնադարյան բալլադներու և հանկարծ սիրային շնորհալիությամբ ու շարանձի զվարթամտությամբ տողախումբ մը կանցնի այդ վեհափառ խստամբերության մեջեն՝ ինչպես թռչուն մը մորկային երկինքի մը մեջեն: ...Հայ բանաստեղծությունը իր մեջ կպարունակե զգացումին բոլոր թերումները»:

Կոլեջ դը Ֆրանսի վարիչ Մորիս Կրուազեն այդ գրքի մասին ասել է. «Ան ինծի ճանչցուց ամբողջ գրականություն մը եզականորեն գրավիչ, որ սիրելի կուտա ան ժողովուրդը, որուն զգացումները կարտահայտե», իսկ Ֆրանսիական ակադեմիայի անդամ Շարլ Դիլին «Վարդենիքի» մասին ասել է. «Դա մի սքանչելի հուշարձան է կանգնեցված ի փառս հայության»:

Անատոլ Ֆրանսը գրել է, թե իրենք վերոհիշյալ հրատարակությունների միջոցով, դրանց էջերից լսել են հայ ժողովրդի ձայնը «մերթ դուցադներգական, մերթ ողբական, ժողովուրդի մը, որ այնքան դարերե ի վեր իր հալոհնիքեն ալի կհամառի, կտոկա, կհուսա»²⁰:

Չոպանյանի թարգմանություններն օգտագործելով, Ալիս Ստոն Պլեկվելը հայ բանաստեղծներին թարգմանել է անգլերեն, Վալերի Բրյուսովը՝ ռուսերեն, Հանս Բետկեն՝ գերմաներեն: Հատկապես Քուչակն ու միջնադարյան այլ բանաստեղծներ այս ձևով են իրենց համար ճանապարհ հարթել դեպի միջազգային համբավը:

Չոպանյանը միայն հետադուտական, թարգմանչական աշխատանքով չէ, որ աշխարհին ծանոթացրել է հայ ժողովրդին ու նրա մշակույթը: Տարիներ շարունակ կենդանի խոսքով նույնն է արել բաղմաթիվ քաղաքներում, մասնավորապես Ֆրանսիայում կարդացած դասախոսություններով ու զեկուցումներով, ունկնդիր ունենալով հասարակական տարբեր խավերի մարդիկ, գրողներ, ուսանողներ, պետական-քաղաքական գործիչներ, արվեստագետներ, գիտնականներ և այլն:

Վերջապես նա այդ շնորհակալ աշխատանքը կատարել է ֆրանսիական մամուլում ու տարբեր հրատարակություններում լույս ընծայած բաղմաթիվ հոդվածներով, որոնց մեջ ամենից առաջ հանդես է եկել իր ժողովրդի ազգային դատին ու նրա մշակույթին անշահախնդրորեն նվիրված քաղաքացին:

Ալեքսանդր Շիրվանզադեն 1925 թ. Չոպանյանի հոբելյանի առթիվ արտասանած ճառում հետևյալ կերպ է բնութագրում հոբելյարին: «Նս թույլ կտամ

19 Գ. Ֆեներձյան, Արշակ Չոպանյան. կենսագրական և մատենագրական նոթեր, Փարիզ, 1938, էջ 46, 45, 42, 66—67:

20 Նույն տեղում, էջ 67—68, 69:

շեշտել մի բան, որ ոսկյա թելով անցնում է Ձեր բազմամյա գործունեության միջով: Դա Ձեր աղգային պատվասիրության և հպարտության անկեղծ զգացումն է: Դա Ձեր անսահման սերն է դեպի հայ ժողովրդի բարոյական և հոգեկան հարստությունը»²¹,

АРШАК ЧОПАНЯН

(К 100-летию со дня рождения)

Доктор искусствоведения Г. Х. СТЕПАНЯН

(Резюме)

Писатель, публицист-редактор, филолог и переводчик Аршак Чопанян является одним из крупнейших представителей армянской культуры. Один из зачинателей реалистического направления в западноармянской литературе, он занимает видное место в ней. Чопанян был также талантливым литературным критиком, в течение многих десятилетий он в Париже издавал литературно-художественный журнал «Анаит», в котором публиковались также многочисленные литературно-критические статьи. Чопанян выделялся как филолог и переводчик, являлся одним из первых исследователей и издателей произведений армянской средневековой литературы. Делал переводы с армянского на французский и с французского на армянский языки. Среди них исключительную ценность представляет его трехтомник «La Roseaie d' Arménie», в котором, как и в других его сборниках, в собственных переводах представлены многочисленные средневековые армянские стихотворения — *таги*, удостоившиеся высокой оценки Анатоля Франса, Густава Шлюмберже, Эмиля Верхарна, Камиля Моклера и др.

Чопанян был горячим патриотом Советской Армении, в редактируемом им журнале часто помещал материалы, посвященные ее достижениям.

²¹ Նույն տեղում, էջ 78: